ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
և
Ռելյատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոն - ցանցի
միջև
համագործակցության մասին**

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե)՝ տեղակայված ք. Երևան (Հայաստանի Հանրապետություն), Օրբելի եղբայրների փ. 22, նախագահ՝ պրոֆեսոր Սամվել Հարությունյան,

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետև՝ Ակադեմիա)՝ տեղակայված ք. Երևան (Հայաստանի Հանրապետություն), Մարշալ Բաղրամյան պող. 24, նախագահ՝ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան, և

Ռելյատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոն - ցանցը (այսուհետև՝ ՌԱՄԿ-ցանց)՝ տեղակայված ք. Պեսկարա (Իտալիայի Հանրապետություն), Հանրապետության պողոտա շ. 10 (C. F. 91080720682), տնօրեն՝ պրոֆեսոր Ռեմո Ռուֆֆինի, (այսուհետև՝ Կողմեր),

կհամագործակցեն ՌԱՄԿ-ցանց–Երևանի հիմնադրման շրջանակներում, որը սկզբնական փուլում կտեղակայվի Ակադեմիայի գլխավոր մասնաշենքում և վերջինիս ենթակայության կազմակերպություններում, և որը ՌԱՄԿ-ցանցի անդամների և ՌԱՄԿ-ցանցի հետ համագործակցող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կխթանի ռելյատիվիստական աստղաֆիզիկայի և հիմնարար գիտությունների առաջընթացը Հայաստանում:
Կողմերը կհամագործակցեն Ազգային Ժողովի կողմից ՌԱՄԿ-ցանց–Երևանի կենտրոնակայանի մասին համաձայնագրի վավերացման ուղղությամբ:

Համագործակցությունը կիրականանա հետևյալ սկզբունքներով.

1. Գիտական նպատակները

ՌԱՄԿ-ցանց–Երևանն իր գործունեությունը կիրականացնի ռելյատիվիստական աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի տեսական և դիտողական ոլորտներում՝ համաձայն ՌԱՄԿ-ցանցի գործունեության և մյուս կողմից կաջակցի ենթակառուցվածքի ստեղծման հարցում՝ հիմք ընդունելով Հայաստանում այդ ուղղությամբ ձևավորված ավանդույթները և ներուժը:

2. Ներկայացուցչություն

Սույն Համաձայնագրի շրջանակներում նախատեսվող գործունեության համակարգման նպատակով Կոմիտեն, Ակադեմիան և ՌԱՄԿ-ցանցը կստեղծեն ՌԱՄԿ-ցանց–Երևանի Կառավարողների խորհուրդ, որի կազմում ընդգրկված կլինեն ՌԱՄԿ-ցանցի տնօրենը (ՌԱՄԿ-ցանց–Երևանի Կառավարողների խորհրդի նախագահ), մեկական անդամ ՌԱՄԿ-ցաանցի Կառավարողների և Գիտական խորհուրդներից, Կոմիտեի նախագահը, Ակադեմիայի նախագահը և մեկ ներկայացուցիչ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից:

3. ՌԱՄԿ-ցանց–Երևանի տնօրենը և կադրային ապահովում

Սկզբնական շրջանում ՌԱՄԿ-ցանց–Երևանի կազմում ներգրավված կլինեն երեք (3) գիտական աշխատողներ, մեկ (1) ցանցային ադմինիստրատոր և մեկ (1) քարտուղար, որոնք կնշանակվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ՀՀ ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՌԱՄԿ-ցանց–Երևանի տնօրենը և կադրային կազմը կառաջադրվեն, կընտրվեն և կքվերարկվեն ՌԱՄԿ-ցանց–Երևանի Կառավարողների խորհրդի կողմից:

ՌԱՄԿ-ցանց–Երևանի տնօրենը կիրականացնի ՌԱՄԿ-ցանցի Կառավարողների խորհրդի և Գիտական խորհրդի որոշումները:

4. ՌԱՄԿ-ցանց–Երևանի գործունեության ոլորտները և ձևերը

ՌԱՄԿ-ցանց–Երևանը ներգրավված կլինի հետբուհական և հետդոկտորական մակարդակներում հետազոտությունների իրականացման և կադրերի վերապատրաստման ոլորտներում: Հատուկ ուշադրություն կդարձվի տարածաշրջանային գիտական կենտրոններում հետազոտությունների խթանմանը:

ՌԱՄԿ-ցանց–Երևանի գործունեությունն իր մեջ կներառի նաև ՌԱՄԿ-ցանց–Երևանի իրավասության շրջանակներում դպրոցների, դասընթացների, սեմինարների և գիտաժողովների կազմակերպում՝ ակտիվ փոխայցելությունների ծրագրով:

5. ՌԱՄԿ-ցանցի դերը

ՌԱՄԿ-ցանցը ՌԱՄԿ-ցանց–Երևանի օրինական ներկայացուցիչն է: Այն կմասնակցի որպես ՌԱՄԿ-ցանց–Երևանի հիմնադրման և գործունեության իրականացման համար որոշումներ կայացնող կողմ:

ՌԱՄԿ-ցանցը կաջակցի ՌԱՄԿ-ցանց–Երևանի միջազգային գործունեությանը:

ՌԱՄԿ-ցանցը կհամագործակցի ՌԱՄԿ-ցանց–Երևանի միջոցների հայթայթման, բոլոր ոլորտներում գործունեության կազմակերպման գործում և կհովանավորի տարածաշրջանային երկրներից գիտնականների այցելությունները:

ՌԱՄԿ-ցանցը հայաստանյան շահագրգիռ համալսարաններում կներդնի «IRAP» ասպիրանտական ծրագիրը:

ՌԱՄԿ-ցանցը երաշխավորում է, որ դասավանդման լավագույն մեթոդները և հետազոտական սարքավորումները հասանելի կլինեն ՌԱՄԿ-ցանց–Երևանի ասպիրանտներին և այցելող մասնագետներին: Մասնավորապես, ՌԱՄԿ-ցանցը կխթանի ՌԱՄԿ-ցանց–Երևանի ուսանողների և հետազոտողների փոխադարձ այցելությունները: Նրանք կարող են օգտվել ՌԱՄԿ-ցանցի բոլոր հնարավորություններից և սարքավորումներից, որոնք գտնվում են ՌԱՄԿ-ցանցի գլխամասում, Հռոմում (Իտալիա), Պեսկարայում (Իտալիա), Նիցցայում (Ֆրանսիա), Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա) և վերջիններիս միջոցով համագործակցել բոլոր եվրոպական բուհերի հետ: Ուսանողները կարող են գրանցվել ասպիրանտական «IRAP» ծրագիրն իրականացնող բոլոր համալսարաններում և հետազոտական հաստատություններում:

ՌԱՄԿ-ցանցը կներդնի ՌԱՄԿ-ցանց–Երևանի գիտական աշխատողների շարժունության ապահովման տարեկան ծրագրեր՝ ապահովելով նրանց այցելությունները ՌԱՄԿ-ցանցի այլ կենտրոններ:

ՌԱՄԿ-ցանցը կօժանդակի ՌԱՄԿ-ցանց–Երևանում գիտական բազաների կենտրոնի ստեղծմանը՝ տրամադրելով համակարգչային սարքավորումներ և ապահովելով երկրի վրա և տիեզերքում տեղակայված աստղադիտարաններից ստացվող տեղեկատվության տեղափոխումը:

6. Կոմիտեի դերը

Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում Կոմիտեն՝ համաձայն ՌԱՄԿ-ցանց–Երևանի ամենամյա ծրագրի, կտրամադրի ֆինանսական օժանդակություն:

7. Ակադեմիայի դերը

Ակադեմիան տրամադրում է անհրաժեշտ տարածք Ակադեմիայի գլխավոր մասնաշենքում և վերջինիս ենթակայության կազմակերպություններում ՌԱՄԿ-ցանց–Երևանի գործունեության իրականացման համար:

Ակադեմիան համակարգում է ՌԱՄԿ-ցանց–Երևանի գիտական և գիտատեխնիկական գործունեությունը և նպաստում է ՌԱՄԿ-ցանց–Երևանի և Ակադեմիայի այլ գիտական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը:

Ակադեմիան հաստատում է ՌԱՄԿ-ցանց–Երևանի զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև տարեկան ծրագիրը:

Սույն Համաձայնագիրը կատարված է 3 բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Քաղաք՝ Երևան «25» հուլիսի 2013 թ.

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից	ՀՀ ԳԱԱ կողմից	ՌԱՄԿ –ցանցի կողմից
Սամվել Հարությունյան	Ռաֆիկ Մարտիրոսյան	Ռեմո Ռուֆֆինի
Նախագահ	Նախագահ	Տնօրեն